

Հարցաշար
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
8-րդ դասարան - 120 րոպե

N 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

- 1. Ի՞նչ անվանեց Նոյն իր իջևանած առաջին վայրը: (0,5 միավոր)**
1) Բաբելոն 2) Արարատ 3) Նախիջևան 4) Արտաշատ

- 2. Ի՞նչ է նշանակում եկեղեցի: (0,5 միավոր)**
1) Զրիստոնյաների ժողով 2) Հաղորդվողների ժողով
3) Ապաշխարողների ժողով 4) հավատացյալների ժողով

- 3. Որտե՞ղ են թաղում Ս. Արիստակես Հայրապետին իր աշակերտները: (0,5 միավոր)**
1) Ծովքում 2) Թիլ ավանում
3) Թորդան ավանում 4) Աշտիշատում

- 4. Աշոտ Երկաթից հետո ո՞վ է գահ բարձրանում: (0,5 միավոր)**
1) Աբաս Բագրատունի 2) Գագիկ Ա.
3) Սմբատ Ա. 4) Գագիկ Բ.

- 5. Քանի՞ տարի է աթոռակալել Սարգիս Ա. Սևանցի կաթողիկոսը: (0,5 միավոր)**
1) 37 2) 17 3) 27 4) 23

- 6. Ի՞նչ է բարձրանում եկեղեցիների շինության կենտրոնական մասում: (0,5 միավոր)**
1) Գմբեթ 2) Խորան 3) Խաչ 4) Վարագույր

- 7. Ո՞ր կաթողիկոսի օրոք է Ս. Սարգսի տոնը հռչակվել երիտասարդների օրհնության օր: (0,5 միավոր)**
1) Գարեգին Ա. 2) Գևորգ Ե. 3) Վազգեն Ա. 4) Գարեգին Բ.

- 8. Բյուզանդացիները ո՞ր թվին են գրավում Անի մայրաքաղաքը: (0,5 միավոր)**
1) 1055 թ. 2) 1045 թ. 3) 1047 թ. 4) 1035 թ.

N9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

- 9. Հաղորդություն ստանալու համար անպայման պետք է _____ լինել: (1 միավոր)**

- 10. Ս. Ղևոնդյանը ներկայացնում էին եկեղեցական բոլոր աստիճանները _____ մինչև _____: (1 միավոր)**

11. _____ լեզվով գրականության ստեղծումը թուլացրեց օտար մշակույթների ազդեցությունը...: (1 միավոր)

12. 1113 թ. Կարմիր վանքում գումարված եկեղեցական ժողովը կաթողիկոս Է ընտրում _____: (1 միավոր)

N 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Եղելությունները համապատասխանեցնել անձերին: (1 միավոր)

- | | |
|---|------------------------|
| 1. Եղեսիայում եպիսկոպոսական աթոռի հիմնում | ա. Ս. Ներսես Ա. Մեծ |
| 2. Աշտիշատի ժողով | բ. Հովսեփ Ա. կաթողիկոս |
| 3. Ավարայրի ճակատամարտ | գ. Ներսես Գ. կաթողիկոս |
| 4. Դվինի երկրորդ ժողով | դ. Ս. Թադեոս առաքյալ |
| | ե. Ներսես Բ. կաթողիկոս |

1	
2	
3	
4	

14. Բառերը համապատասխանեցնել իմաստներին: (1 միավոր)

- | | |
|---------------|---------------------------|
| 1. Մոլորյալ | ա. Հյուրանոց |
| 2. Մաքսավոր | բ. Խորամանկ |
| 3. Զատս | գ. ճիշտ ճանապարհից շեղված |
| 4. Իջևանատուն | դ. Խառնակ վիճակ |
| | ե. Հարկահավաք |

1	
2	
3	
4	

N 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացությունն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

15. Հիսուս Զրիստոսի երկրային գործունեությունը դասավորել ըստ հերթականության: (1 միավոր)

- ա. Վերջին Ընթրիք
բ. Փորձություն
գ. Մատնություն
դ. Մկրտություն
ե. 12 աշակերտների ընտրություն

1	
2	
3	
4	
5	

16. Իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության: (1 միավոր)

- ա. Ձիրավի ճակատամարտ
- բ. Վահան Մամիկոնյանի մարզպան դառնալը
- գ. Ս. Վրթանես Չայրապետի վախճանում
- դ. Վրաց եկեղեցու բաժանումը Արևելյան եկեղեցական ընտանիքից
- ե. Մայր Տաճարի՝ Կաթողիկե եկեղեցու կառուցում

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. Կարդալ և պատասխանել հարցերին:

«Իսկ նա հրամայեց, որ ամեն մի գավառում շինեն աղքատանոցներ...: Նույնպես սահմանում է, որ բոլոր գյուղերում իջևաններ շինվեն օտարականների համար, սննդի տեղեր, որբերի և ծերերի համար և խնամք չքավորների համար: Շինում է նաև անապատ և անմարդաբնակ տեղերում եղբայրանոցներ և մենաստաններ...»:

1) Ո՞ւմ աշխատությունից է վերցված հատվածը: (1 միավոր)

2) Ո՞ւմ մասին է խոսքը: (1 միավոր)

N 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ: (2 միավոր)

1) Արաբական տիրապետության ժամանակաշրջանում հայ ժողովուրդը ենթարկվում էր ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև կրոնական խիստ ճնշումների:

2) Սմբատ Ա.-ն Երազգավորսում թագադրվում է Յովհաննես Ե. Դրասխանակերտցու ձեռքով:

3) Անանիա Ա. Մոկացու կարևոր ձեռնարկներից էր բուն Չայաստանի սահմաններից դուրս՝ **Անտիոքում և Կիլիկիայի Տարսոն քաղաքում հայկական թեմերի հիմնումը:**

4) IX դարի երկրորդ կեսին Սյունիքում վերականգնվում է **Սյունյաց** մետրոպոլիտությունը՝ **Տաթև** կենտրոնով:

5) 1081 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո մի քանի հայ իշխանական տներ փորձում էին ստեղծել հոգևոր նոր կենտրոններ:

--	--

19. Թվարկված տոներից ո՞ր երկուսը շարժական չեն:

(2 միավոր)

- 1) Ա. Ծնունդ
- 2) Ա. Վարդանանց
- 3) Խաչվերաց
- 4) Տյառնընդառաջ
- 5) Ա. Հարություն
- 6) Ա. Սարգիս
- 7) Կաթողիկե Սուրբ Էջմիածնի

--	--

20. Շարադրանք:

(2 միավոր)

Ներկայացրե՛ք Հայրապետական արձույթի Հոռոմկլայում հաստատման (Գրիգոր Բ. օրոք) պատմությունը և կաթողիկոսների ընտրության նոր կարգը: